ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/65

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.05.2018թ. թիվ 03/26-3/9297-18 գրությամբ Ա/Ձ Թեմուր Գալստյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի 23.05.2018թ. թիվ 31-272 գրության հիման վրա, 24.05.2018թ. թիվ 03/26-3/9297-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել Ա/Ձ Թեմուր Գալստյանին (այսուհետ՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>Ա/Ձ Թեմուր Գալստյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Ա/Ձ Թեմուր Գալստյանը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 31.05.2018թ. թիվ 31/05-18/1 գրությամբ հայտնել է, որ 21.04.2018թ. ներկայացրել է հայտ՝ մասնակցելով «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված ընթացակագին: Մեկ չափաբաժնով Մասնակիցը ճանաչվել է հաղթող: Տվյալ չափաբաժնով գնային առաջարկը (ներառյալ ԱԱՀ-ն) կազմել է 412 800 ՀՀ դրամ: «ՀՀՌՑ» ՓԲԸ-ն առ 21.04.2018թ. դրությամբ հարկային պարտավորությունների վերաբերյալ հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ, ստացել է պատասխան, որ Ա/Ձ Թեմուր Գալստյանը այդ օրվա դրությամբ ունեցել է 22 458 ՀՀ դրամի ապառք, որի մասին Մասնակիցը տեղեկացվել է «ՀՀՌՑ» ՓԲԸ-ի կողմից 11.05.2018թ.:

Ա/Ձ Թեմուր Գալստյանը նշել է, որ այդ օրվա դրությամբ արձանագրված 22 458 ՀՀ դրամից 14 631 դրամը եղել է որպես 2017թ. տարեկան եկամուտների հաշվարկով առաջացած պարտք, իսկ համաձայն «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ կետի՝ տարեկան եկամուտների մասին հաշվարկի արդյունքներով եկամտային հարկի գումարի վճարման վերջնաժամկետ է սահմանվում մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը: Այնպես որ 14 631 ՀՀ դրամը չի կարող համարվել ժամկետանց պարտք:

09.04.18թ. Մասնակիցը ՀՀ ԿԱ ՊԵԿ է ներկայացրել 2017թ. տարեկան եկամուտների հաշվարկը, իսկ 03.05.18թ. կատարել տվյալ հաշվարկի ճշտում՝ վերահաշվարկի արդյունքում առ 21.04.18թ. դրությամբ ունենալով ոչ թե ապառք, այլ գերավճար՝ 18 173 ՀՀ դրամի չափով: Սակայն ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀՎՍՎ թիվ 15 բաժնից հարկային պարտավորությունների մասին տեղեկանքը «ՀՀՌՑ» ՓԲԸ-ին է ուղարկվել միայն 05.05.2018թ., հաշվարկի ճշտումից հետո:

Համաձայն ՀՕ-ի 325-րդ հոդվածի 4-րդ կետի, ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորությունները նախ պետք է մարվեն դեբետային գումարների հաշվին, որը Մասնակցի մոտ առկա է մինչև օրս, և որից հետո մնացած պարտքի գումարը՝ միասնական հաշվից: 2017թ. 4-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկով Մասնակիցն ունեցել է պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումար, որը, համաձայն ըստ վերը նշված

հոդվածի այն պետք է մարվեր ԱԱՀ-ի դեբետային մնացորդից, բայց այդ գումարից 33 219 ՀՀ դրամը 15.01.18թ. մարվել է առաջին հերթին միասնական հաշվից, ապա նոր՝ դեբետային մնացորդից, որը հակասում է այս հոդվածի պահանջներին, այսինքն ծրագրի և օրենսգրքի պահանջները չեն համապատասխանում միմյանց: Տվյալ դեպքում, եթե վճարումները կատարվեին ԱԱՀ-ի դեբետային մնացորդից, ապա Մասնակցի մոտ ամբողջ ժամանակահատվածում կառաջանար միայն գերավճար: Նույնիսկ ՊԵԿ-ի էլեկտրոնային էջի՝ հարկային պարտավորությունների բաժնում, մինչև օրս կարմիր գույնի տառերով նշվում է տեղեկություն հետևալ տեսքով՝ «Հարգելի հարկ վճառող, հարկային հաշվարկների ընդունման, պարտավորությունների մարման և անձնական հաշիվ քարտի վճարման էլեկտրոնային համակարգը ներկայումս գտնվում է փորձնական գործարկման փուլում, ինչի հետ կապված Ձեր կողմից արտատպված անձնական հաշվի քարտի քաղվածքում ներառված տեղեկությունները հնարավոր է վերջնական չլինեն և որը կարող է ճշգրտվել»:

Քանի որ մինչև ապրիլ ամսվա վերջը միասնական հաշիվը չի գործել, (էլեկտրոնային եղանակով չի բացվել) Մասնակիցը չի կարողացել կողմնորոշվել, թե ինչ սկզբունքով է կատարվում հարկերի հաշվառումը էլեկտրոնային եղանակով, այդ ժամանակահատվածում Մասնակիցը հիմնվել է ՀՕ-ի 18-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներին, որտեղ նշվում է, որ հարկի վճարումը կատարվում է վերահաշվարկային համակարգի միջոցով:

Եթե միասնական հաշիվը լիներ գործող, ապա Ա/Ձ Թեմուր Գալստյանը, հիմնվելով փաստացի հաշվառման մեթոդի վրա, կվճարեր ևս 3701 ՀՀ դրամ և ցանկացած պարագայում չէր ունենա ապառք:

Վերը նշված հարցով, պարզաբանման համար Ա/Ձ Թեմուր Գալստյանը 11.05.2018թ. գրավոր դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալին, բայց մինչև օրս չի ստացել պատասխան: ՀՕ-ի 307-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսվում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը նամակին պետք է պատասխանի 15 օրվա ընթացքում: Ելնելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներից, նշված ժամկետում պարզաբանում չստանալու դեպքում դիմող անձն իրավասու է իրավական ակտի պահանջներն իրականացնելիս առաջնորդվել իր ներկայացրած պարզաբանման տարբերակով:

Ելնելով վերը շարադրվածից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Թեմուր Գալստյանը սկսած 2001թ. որպես անհատ ձեռնարկատեր աշխատում է առանց ընդհատումների և պետական բյուջեի հանդեպ ապառքներ չի ունեցել, իսկ եթե ունեցել է, ապա դրանք եղել են շատ փոքր գումարներ, որոնք անմիջապես Մասնակիցը վճարել է, Ա/Ձ Թեմուր Գալստյանը խնդրել է բողոքը քննող անձին, ևս մեկ անգամ վերանայել իր կողմից նշված առարկությունների համապատասխանությունը գործող օրենսդրությանը և Մասնակցին չզրկել գնումներին մասնակցելու իրավունքից:

Ա/Ձ Թեմուր Գալստյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/65 ընթացակարգի շրջանակներում 01.06.2018թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու), ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 23.05.2018թ. թիվ 31-272 գրությամբ հայտնել է, որ «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ա/Ձ Թեմուր Գալստյանի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 44-րդ կետի համաձայն, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվությունը ստացվել է Կարգով սահմանված ժամկետից ուշ:

Կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով

նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, որի հիման վրա վերոհիշյալ մասնակիցների հայտերը մերժվել են:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/65 ընթացակարգի շրջանակներում 01.06.2018թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/65 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/65 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով 21.04.2018թ. հայտ է ներկայացրել Ա/Ձ Թեմուր Գալստյանը:

2. Մասնակիցը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

3. Մասնակիցը հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է ***412 800 ՀՀ դրամ:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.04.2018թ. ժամը 14:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացված որոշմամբ Ա/Ձ Թեմուր Գալստյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով:

5. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 10.05.2018թ. տրամադրված

եզրակացության համաձայն՝ ***Ա/Ձ Թեմուր Գալստյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 22 475 ՀՀ դրամի չափով:***

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.05.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.2-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.05.2018թ. Ա/Ձ Թեմուր Գալստյանի հայտը մերժել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.05.2018թ. թիվ 03/26-3/9297-18 գրությունը, «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի 23.05.2018թ. թիվ 31-272 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրությունը, Ա/Ձ Թեմուր Գալստյանի 31.05.2018թ. թիվ 31/05-18/1 գրավոր դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 21.04.2018թ. հայտ է ներկայացրել Ա/Ձ Թեմուր Գալստյանը:

Մասնակիցը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Մասնակիցը հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է ***412 800 ՀՀ դրամ:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.04.2018թ. ժամը 14:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացված որոշմամբ Ա/Ձ Թեմուր Գալստյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 03.05.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե Ա/Ձ Թեմուր Գալստյանի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 10.05.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***Ա/Ձ Թեմուր Գալստյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 22 475 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.05.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.2-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.05.2018թ. Ա/Ձ Թեմուր Գալստյանի հայտը մերժել է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը Ա/Ձ Թեմուր Գալստյանի ինչպես նաև մի շարք այլ մասնակիցների վերաբերյալ 04.06.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/9969-18 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով հայտնել, թե մասնակիցների մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունն առաջացել է վերջիններիս գործողությունների և վարքագծի հետևանքով և առկա է արդյոք վերջիններիս մեղքը, թե ստեղծված իրավիճակը պայմանավորված է հարկային մարմնի կողմից ներդրված նոր համակարգի աշխատանքով:

Ի պատասխան ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վերոհիշյալ գրության՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18

գրությամբ հայտնել է, որ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով, 2018 թվականի հունվարի 1-ից սկսած, միասնական հաշվի միջոցով մարվող հարկային պարտավորությունների մարման նպատակով վճարումները կատարում են միասնական հաշվին: Հարկային պարտավորությունների կատարման վերջնաժամկետները սահմանված են օրենսգրքի համապատասխան բաժիններով, իսկ հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման կարգը՝ օրենսգրքի 319-րդ հոդվածով: Հարկային պարտավորությունների մարման կարգը սահմանված է օրենսգրքի 325-րդ հոդվածով, իսկ վերջինիս վերաբերող անցումային հարկային հարաբերությունների կարգավորումները՝ օրենսգրքի 456-րդ հոդվածով: Նույն գրությամբ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը հայտնել է, որ վերոնշյալ կարգավորումների ծրագրային ապահովման ներդրումը կրում է պիլոտային բնույթ, ուստի անհարժեշտ է հաշվի առնել 2018 թվականի հունվարի 1-ից հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման ու հարկային պարտավորությունների մարման նոր կարգին հարկ վճարողների իրազեկված չլինելու հանգամանքը:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 10.05.2018թ. տրամադրված եզրակացության՝ Ա/Ձ Թեմուր Գալստյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 22 475 ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված

Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը: Միևնույն ժամանակ ուսումնասիրելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրությունը, գտնում եմ, որ Ա/Ձ Թեմուր Գալստյանը «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում չի խախտել ստանձնած պարտավորություն, քանի որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրության մեջ մատնանշված պատճառներով, առկա է Մասնակցի իրազեկված չլինելու հետևանքով ժամկետանց հարկային պարտավորություն ածանագրվելու իրավիճակը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև Ա/Ձ Թեմուր Գալստյանի վարքագիծը, գտնում եմ, որ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.05.2018թ. թիվ 03/26-3/9297-18 գրությամբ Ա/Ձ Թեմուր Գալստյանին (ՀՎՀՀ՝ 40514777) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**